

Մտտանան գիւղի մէջ զարգացաւ Մովսէսի մանկութիւնը. մերձակայ մենաստանը, հռչականունն Տաթեւ ձգեց իրեն նորահաս պատանին, որ սիրեց այնուհետեւ այն միանձնարանը, ուր Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի եւ Առաքել Սիւնեցի պայծառացած էին երբեմն: Հաւանօրէն հոս ընդունեցաւ անիկա, հնգետասանամեայ հասակի մէջ, քահանայական ձեռնադրութիւնը իրրեւ կուսակրօն արեղայ (Դաւր. 284):

Իրրեւ Տաթեւի վանքին միաբան կոչուեցաւ Մովսէս այսուհետեւ Տաթեւացի, թէեւ հայրենեօք հոտախանցի էր:

4. ՄՈՎՍԵՍ ԱՌ ՈՏՍ ՄՐԱՊԻՈՆ ՈՒՐ ՀԱՅԵՅԻՈՅ

Հաճելի էր անշուշտ նորընծայ արեղային ճգնաղգեաց կեանքը այն լեռնապատ մենարանին մէջ, բայց զգաց ան իր մէջ պահանջքը, հոգեւոր յառաջադիմութեան հետ ունենալ եւ մտքի լուսաւորութիւնը, զոր չէր կրնար տալ իրեն Տաթեւը ժամանակակից հանդամանքներու մէջ: Այս լոյսի ի խնդիր տուաւ փոքրիկ արեղան հրաժեշտ Սիսական աշխարհին. իջաւ Արարատեան դաշտ¹, շարունակեց ճա-

¹ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Զամբո, Վաղարշապատ 1873, էջ 176, կը գրէ. «Նախապէս ի գեօղս Աշտարակ Մովսէս կաթողիկոսն առնու զայդի մի յԵրեւանցի Մուրատի դուստր Հատիէն՝ հինգ թումանի... ի թուին Տաճկաց ՌԴ»: Հիճրէի 1004 կը համապատասխանէ փրկչական 1595/96 տարւոյն: Եթէ ուղիղ է տրուած թուականը, պիտի հետեւցնենք թէ